

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ ԴԱՎԻԹԻ

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ՍԵՂՄԱԳԻՐ

**Ը. 00.01. – «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի
պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ԵՐԵՎԱՆ – 2021

**Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամսոն Աշոտի Դավոյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմենակ Վաղարշակի Դարբինյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ատոմ Շավարշի Մարգարյան

**Առաջատար
կազմակերպություն՝** **Հայ-Ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. ապրիլի 16-ին, ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. մարտի 4-ին:

**015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

Տր. Հարությունյան

Ա.Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ժամանակակից պայմաններում համաշխարհային տնտեսությունը հանդիպում է բազմաբնույթ մարտահրավերների, երկրների և տարածաշրջանների փոխկապվածության նոր պայմանների հետ: Որպես առաջնահերթ իմնախնդիր հանդես է գալիս տնտեսական համակարգերի կայունության ապահովումը: Նման իրավիճակում տնտեսության զարգացումը, բնակչության կյանքի որակի բարելավումը դիտարկվում են որպես երկրի միջազգային մրցունակության կարևորագույն հիմնադրույթներ: Առանձին երկրներում իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումները տարաբնույթ ազդեցություններ են թողնում ազգային տնտեսության զարգացման ընթացքի վրա. որոշ երկրների հաջողվել է հասնել տնտեսական աճի տեմպերի կայունացման, այնինչ մյուս երկրները շարունակում են մնալ վերակառուցման փուլում: Այնուամենայնիվ, անցումային տնտեսությամբ երկրները ևս մասնակցում են ինտեգրացիոն գործընթացներին, ուստի ազգային տնտեսության մրցունակության ցուցանիշների բարելավումը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն:

Երկրի միջազգային մրցունակության վերջնական նպատակը բնակչության կյանքի որակի բարելավումն է, իսկ մրցունակության բարելավման հիմնական աղբյուրն ու շարժիչ ուժը՝ արտադրողականությունը, որի շնորհիվ երկիրը հնարավորություն է ստանում ձեռք բերելու մրցակցային առավելություններ՝ ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման համար: Միաժամանակ, արդի պայմաններում մրցունակության մակարդակի բարելավումը, մրցակցային առավելությունների իրացումն ապահովվում են ի հաշիվ արտադրողական ուժերի զարգացման, երկրի բնակչության կյանքի որակի բարելավման համար անհրաժեշտ բարենպաստ պայմանների ստեղծման:

Տնտեսական զարգացման արդի փուլում մրցունակության իմնախնդիրը համարվում է յուրաքանչյուր երկրի քաղաքականության առաջնային օղակը, ինչով էլ պայմանավորված՝ ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն: Մրցակցային առավելությունների ձևավորումը վերածվում է պետական քաղաքականության ռազմավարական ուղղության, և վերաբերվում է հիերարխիայի բոլոր մակարդակներին՝ արտադրանքի (ապրանքների և ծառայությունների), կազմակերպությունների, ճյուղերի, տարածաշրջանների և երկրի: Երկրի տնտեսական զարգացման օրինաչափությունների և գործոնների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի մրցակցային առավելությունների

ձևավորումը: Վերջինիս վրա, բացի այլ գործոններից մեծ ազդեցություն ունի երկրի մասնակցությունը ինտեգրացիոն միավորներում և դրա տնտեսական ցուցանիշների համապատասխանեցումը ինտեգրացիոն միավորման երկրների ցուցանիշներին:

Այնուամենայնիվ, ինստիտուցիոնալ զարգացման, տնտեսական մրցակցության հիմնախնդիրները, ցածր նորարարական ակտիվությունը թույլ չեն տալիս ՀՀ-ին լիարժեք կերպով իրացնելու ներուժային մրցակցային առավելությունները և ապահովելու մեր երկրի մրցունակության բարելավումը երկարաժամկետում:

ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրների բացահայտման և լուծման կարևորությունը պայմանավորված է մեր երկրի առաջ ծառայած մարտահրավերների, առկա սոցիալական, տնտեսական հիմնախնդիրների առանձնահատկություններով, որոնք պահանջում են տնտեսության մրցակցային առավելությունների և զարգացման ուղիների բացահայտում:

Նման խնդիրների առկայության պարագայում խիստ կարևոր նշանակություն է ստանում ՀՀ-ի ազգային մրցունակության գնահատումը, առկա հիմնախնդիրների վերհանումը և մրցունակության բարելավման հնարավորությունների բացահայտումը: Ուստի ինտեգրացիոն գործընթացների պայմաններում ՀՀ-ի մրցունակության բարելավման հնարավորությունների ուսումնասիրությունը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ միջերկրային համեմատական վերլուծությունների իրականացման, պետական կարգավորման ուղղությունների մշակման համար:

Հետազոտությունը նվիրված է վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի ներկայացմանը և լուծմանը, մրցունակության գնահատման գործիքակազմի, մեթոդների կատարելագործման մոտեցումների հետազոտմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Թեմայի հետազոտվածության աստիճանը:

Տնտեսական ինտեգրման գործընթացների առաջացման, ազգային տնտեսության մրցունակության ապահովման հիմնախնդիրները տարբեր ժամանակներում գտնվել են մի շարք տնտեսագետների հետազոտական հետաքրքրությունների շրջանակներում: Նրանց շարքում են Օ. Բեյլին, Մ. Պորտերը, Լ. Կավերսը, Բ. Բալասան և այլք: Դիտարկված հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության նպատակով յուրաքանչյուր տարի կազմակերպվում են տարաբնույթ միջազգային գիտական միջոցառումներ և հանդիպումներ (Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից Դավոսում

կազմակերպվող տարեկան հավաքները, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային Բանկի կողմից կազմակերպվող համաժողովները և այլն):

Ազգային, միջազգային հետազոտողների աշխատությունները, վերը թվարկված կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցներն ունեն առանձնահատուկ կարևորություն՝ միջազգային մրցունակության, տնտեսական ինտեգրման գործընթացների առանձնահատկությունների և ուղղությունների ուսումնասիրությունների տեսանկյունից, այնուամենայնիվ, դեռևս առկա են մի շարք հիմնահարցեր, որոնք լրացուցիչ հետազոտման կարիք ունեն: Նման հիմնահարցերից են ազգային տնտեսության մրցունակության վրա ինտեգրացիոն գործընթացների ազդեցության ուղղությունների վերլուծությունը, ինտեգրացիոն միավորման կազմում մրցակցային առավելությունների ձևավորման և իրացման, հետևապես նաև մրցունակության բարելացման հնարավորությունների բացահայտումը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության առանձնահատկություններն ու պայմանները, դիտարկել մրցակցային առավելությունների ձևավորման հիմնախնդիրները, ինչպես նաև առաջարկներ ներկայացնել ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման ուղիների վերաբերյալ:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել ազգային տնտեսության մրցունակության գնահատման տեսամեթոդական մոտեցումները, բացահայտել մրցունակության հասկացության տարաբնույթ ուղղությունները և առանձնահատկությունները,
2. Բացահայտել մրցունակության բարելավման, մրցակցային առավելությունների ձևավորման գործոնները, բնորոշել դրանց փոխադարձ կապը և ազդեցությունը մրցունակության մակարդակի վրա,
3. Գնահատել առանձին գործոնների ազդեցությունը մրցունակության մակարդակի վրա,
4. Իրականացնել միջազգային մրցունակության գնահատման մեթոդական մոտեցումների համեմատական վերլուծություն,
5. Դիտարկել ազգային տնտեսության մրցունակության և տնտեսական ինտեգրացիայի փոխկապակցվածությունը,

6. Գնահատել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների մրցունակության ներուժը, առանձնահատկությունները ինտեգրացիոն գործընթացների պայմաններում (Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրինակով),
7. Դիտարկել ՀՀ տնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշները, ուսումնասիրել դրանց դինամիկան,
8. Բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության ապահովման և բարելավման հիմնախնդիրները,
9. Բացահայտել ինտեգրացիոն գործընթացների պայմաններում ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հնարավորությունները:

Ատենախոսության օբյեկտը և առարկան:

Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության միջազգային մրցունակությունն է՝ ինտեգրացիայի պայմաններում, իսկ ուսումնասիրության առարկան՝ պայմանների ու գործոնների ամբողջությունն է, որն ապահովում է երկրի միջազգային մրցունակությունը:

Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության համար տեսական հիմք հանդիսացել են մրցունակության ուսումնասիրության, գնահատման և վերլուծության վերաբերյալ ազգային և միջազգային գիտական գրականության մեջ առկա աշխատությունները, որոնցից են Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոյի, Մ. Պորտերի, Զ. Կուռնոյի, Կ. Մակկոնելլի, Զ. Դանինգի, Ֆ. Հայեկի, Պ. Հայնեի, Ժ. Վոլտերի, Դ. Չոյի, Ա. Ալջանի, Խ. Մունի, Պ. Ռուզմանի և այլոց աշխատությունները: Մեթոդական հիմք են հանդիսացել մրցունակության մակարդակի՝ տարբեր միջազգային կազմակերպությունների, հետազոտական խմբերի և կենտրոնների կողմից գնահատման մոտեցումները (Համաշխարհային բանկ, ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կազմակերպություն /UNCTAD/, Առևտրի միջազգային կազմակերպություն, Համաշխարհային տնտեսական համաժողով և այլն):

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ պետական կառավարման մարմինների պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալները, Եվրասիական տնտեսական միության տվյալների շտեմարանները, զեկույցներն ու հաշվետվությունները, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման միջազգային համաժողովի, այլ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցները, հաշվետվություններն ու առանձին երկրների պաշտոնական վիճակագրությունը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վերլուծության և համադրման, գիտական վերացարկման, համեմատական, վիճակագրական, գործոնային գնահատման մեթոդները՝ օգտագործելով SPSS ծրագրային փաթեթի գործիքակազմը:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ուսումնասիրության արդյունքում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

1. Վերլուծվել են միջազգային մրցունակության՝ տարբեր հետազոտողների, միջազգային կազմակերպությունների կողմից տրված սահմանումները, որոնց ընդհանրացման արդյունքում առաջարկվել է ազգային տնտեսության մրցունակության նոր սահմանում:
2. ԵԱՏՄ անդամ երկրների մրցունակության ներուժի, դրա առանձին ուղղությունների (արտաքին և փոխադարձ առևտուր, ֆինանսական և ներդրումային ներուժ) առանձնահատկությունների գնահատման հիման վրա բացահայտվել են այդ երկրներում առկա հիմնախնդիրները, ներկայացվել մրցունակության ներուժի իրացման հնարավորությունները:
3. Արտահայտված համեմատական առավելությունների գործակցի կիրառմամբ իրականացվել է ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքի վերլուծություն, որի արդյունքում առանձնացվել են ՀՀ արտաքին առևտրի ներուժային ուղղությունները:
4. Մշակվել և կառուցվել է նոր՝ մրցունակության ներուժի ինտեգրալային համաթիվ, որի կազմում որպես ենթահամաթիվեր ընդգրկված տարբեր համաթիվերի կշռային գործակիցները հաշվարկվել են յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դրանց հարաբերական կարևորության:

ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության համատեքստում, ուստի մշակված մոտեցումների գործնական կիրառումը կընձեռի լայն հնարավորություններ մեր երկրի տնտեսական զարգացման համար: Ատենախոսությունում առաջարկված մոտեցումները հիմնված են վերջին տարիների ՀՀ տնտեսական իրավիճակի համակողմանի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում բացահայտված միտումների գնահատման վրա և դրանց գործնական կիրառությունը թույլ կտա ձևավորել մրցակցային առավելությունների ապահովման և մրցունակության բարելավման հետ կապված խնդիրների լուծմանը միտված նպաստավոր միջավայր:

Ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունում իրականացված վերլուծություններից բխող առաջարկությունները, ինչպես նաև ազգային տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրների լուծման համար առաջարկված միջոցառումները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ ՀՀ արտաքին առևտրի, ինստիտուցիոնալ զարգացման, նորարարությունների խթանման ուղիների մշակման, արդյունավետության գնահատման մեթոդաբանության և արդյունավետության ցուցանիշների սահմանման գործընթացներում: Ուսումնասիրությունների արդյունքները կարող են կիրառվել միջազգային մրցունակության հիմնախնդիրներով հետաքրքրվող, մրցունակության ներուժի գնահատում և վերլուծություն իրականացնող տնտեսագետների և հետազոտողների համար:

Ատենախոսությունում դիտարկված մոտեցումները, առաջարկված գնահատման մեթոդը՝ ընդհանրական համաթիվը ևս կարող է օգտակար լինել ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների համար, քանի որ ընդլայնելով դիտարկված ցուցանիշների և ընդգրկված երկրների շրջանակները՝ հնարավոր է իրավիճակային և համեմատական վերլուծություն իրականացնել ցանկացած երկրի, երկրների խմբերի համար՝ բացահայտելով այդ երկրների ազգային տնտեսությունների մրցունակության մակարդակի ապահովմանն ու բարելավմանը նպաստող, ինչպես նաև խոչընդոտող ցուցանիշները և գործոնները, մշակելով բացասական ազդեցություն ունեցող գործոնների ազդեցության նվազեցման (չեզոքացման), դրական ազդեցություն ունեցող գործոնների խթանման քաղաքականություն՝ այդպիսով նպաստելով երկրի միջազգային մրցունակության բարելավման նպատակի իրագործմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության արդյունքները քննարկվել են տարբեր ազգային և միջազգային գիտաժողովների, համաժողովների, մասնագիտական քննարկումների ընթացքում (հետազոտության մոտեցումները ներկայացվել և քննարկվել են Բեռլինի տնտեսագիտության և իրավունքի ակադեմիայի պրոֆեսորների հետ՝ 2018թ. սեպտեմբերի 19-21-ը Կվարեյլիում (Վրաստան)՝ «Այլընտրանքային տնտեսագիտություն» աշնանային ակադեմիայի ընթացքում, զեկուցվել են 2018թ. սեպտեմբերի 13-16-ը և 2019թ.-ի սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի, 2019թ. հոկտեմբերի 21-23-ը ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում կազմակերպված միջազգային գիտաժողովների ընթացքում):

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հայկական և միջազգային ամսագրերում, գիտաժողովների նյութերի ժողովածուներում հրատարակված 12 (տասներկու) գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 159 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորոյթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Միջազգային մրցունակության տեսամեթոդական հիմքերը»** գլխում իրականացվել է միջազգային մրցունակության էության, բնույթագրիչների, տեսությունների ուսումնասիրություն և վերլուծություն: Դիտարկվել են ազգային տնտեսության մրցունակության ձևերը, դրանցից յուրաքանչյուրի վրա ազդող գործոնները: Իրականացվել է նաև միջազգային մրցունակության գնահատման՝ տարբեր ազգային և միջազգային կազմակերպությունների, հետազոտական խմբերի կողմից առաջարկված մոտեցումների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն: Գլխում իրականացվել է նաև միջազգային մրցունակության և դրա վրա ազդող առանձին գործոնների միջև կապի գնահատում՝ կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով:

Մրցունակություն եզրույթը ակադեմիական շրջանակներում լայն կիրառություն է ստացել դեռևս 1980-ական թվականների վերջերից: Մրցունակության տեսությունների էվոլյուցիոն զարգացման ընթացքում եզրույթը մեկնաբանվել է բազմաթիվ հետազոտողների կողմից:

Դիտարկելով և վերլուծելով միջազգային մրցունակության վերաբերյալ տնտեսագիտական գրականության մեջ առկա, տարբեր հետազոտողների, միջազգային կազմակերպությունների կողմից տրված սահմանումները, հարկ ենք համարում նշել, որ դրանք, չնայած նկարագրում են մրցունակություն երևույթն իր առանձին դրսևորումներով և առանձնահատկություններով, այնուամենայնիվ

հնարավորություն չեն ընձեռում լիարժեք և համակողմանի կերպով մեկնաբանել սույն եզրույթը: Հաշվի առնելով ազգային տնտեսության մրցունակության բարդ և բազմամակարդակ բնույթը, մեկ միասնական սահմանման բացակայությունն ու դրա անհրաժեշտությունը, ընդհանրացնելով այս հասկացության վերաբերյալ առկա սահմանումների հիմնական կողմերը՝ առաջարկում ենք ազգային տնտեսության մրցունակության հետևյալ սահմանումը՝

Ազգային տնտեսության մրցունակությունը երկրի ունակությունն է ձևավորելու քաղաքական, սոցիալ-տնտեսական, ֆինանսական ինստիտուտների համակարգված համախումբ, որն անհրաժեշտ է տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում մրցակցային ֆինանսական, ներդրումային, առևտրային, նորարարական ներուժի ձևավորման և իրացման համար՝ նպաստելով տնտեսության զարգացմանը և երկրի բնակչության կյանքի որակի բարելավմանը:

Մեր կողմից առաջարկված սահմանումն ունի հետևյալ առանձնահատուկ տարրերը՝

- Սահմանման հիմքում դրված է տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում մրցակցելու հնարավորությունների ձևավորման կարևորությունը,
- Դիտարկվում է մրցունակության՝ ֆինանսական, ներդրումային, առևտրային և նորարարական ներուժ հասկացությունը,
- Երկրի մրցունակության բարելավման գործընթացում կարևորվում է ինստիտուցիոնալ համակարգը, դրա առանցքային տարրերի համակարգված փոխներգործությունը,
- Կարևորվում է ոչ միայն բնակչության կյանքի որակի բարելավման, այլև երկրի տնտեսության զարգացման անհրաժեշտությունը՝ որպես մրցակցային առավելությունների ձևավորման և իրացման նպատակային արդյունք:

Ատենախոսության երկրորդ՝ «**Ազգային տնտեսության մրցունակության ներուժի վրա ազդող գործոնների վերլուծությունը՝ ինտեգրացիոն գործընթացների պայմաններում**» գլխում ներկայացվել է միջազգային մրցունակության և տնտեսական ինտեգրացիայի գործընթացների փոխազդեցությունը: Ուսումնասիրություններն իրականացվել են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների՝ առևտրային, ֆինանսական ներուժի դիտարկմամբ: Ընդ որում՝ իրականացվել է 2013-2019թթ.-ի համար փոխադարձ և միջազգային առևտրի, առևտրի կենտրոնացման և դիվերսիֆիկացիայի, ներդրումային-ֆինանսական և այլ ցուցանիշների վերլուծություն՝ ինտեգրացիոն խմբավորման, անդամ երկրների վիճակագրական ծառայությունների տվյալների

բազաների հիման վրա: Իրականացված վերլուծությունների արդյունքում առանձնացվել են ԵԱՏՄ անդամ երկրների մրցունակության բնութագրիչները, առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացվել են այդ երկրների մրցունակության բարելավմանը նպաստող պայմանները:

Ինտեգրացիան և մրցունակությունը միմյանց հետ սերտորեն կապված երևույթներ են: Երկիրն այս կամ այն տարածաշրջանային խմբավորմանն ինտեգրման գործընթացում հետապնդում է որոշակի դրական փոփոխությունների, սեփական շահերի իրացման նպատակներ, որոնք, վերջին հաշվով, պետք է հանգեցնեն երկրի, ռեզիդենտ կազմակերպությունների և արտադրության ճյուղերի միջազգային մրցունակության մակարդակի բարձրացմանը: Սակայն, նշված նպատակները կարող են իրագործելի լինել միայն որոշակի պայմանների առկայության պարագայում:

Ազգային տնտեսության մրցունակության վրա ինտեգրացիայի ազդեցությունը կարող է արտահայտվել համեմատական առավելությունների ձևավորման և իրացման, տնտեսական շահերի իրագործման, մասշտաբից տնտեսման, տարածաշրջանային մակարդակով տնտեսական գործունեության ցուցանիշների բարելավման միջոցով¹: Ինտեգրացիայի հիմնական տնտեսական էֆեկտները բնութագրում են փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ինտեգրվող երկրների շուկաներում, այնինչ ինտեգրացիան չի հանդիսանում շուկայի գործունեության արդյունք. այն, նույնիսկ իր պարզագույն մակարդակում, անդամ երկրների արտաքին տնտեսական քաղաքականության, գիտակցված և նպատակաուղղված գործունեության արդյունքն է: Հետևաբար, ինտեգրացիայի էֆեկտների ուսումնասիրությունը կլինի ոչ լիարժեք, եթե ուսումնասիրվեն միայն դրա շուկայական բնութագրերը՝ առանց հաշվի առնելու ինտեգրվող երկրների քաղաքական կոորդինացիան: Ուստի, վերը դիտարկված էֆեկտները կարելի է լրացնել նաև այլ՝ *անդամ պետությունների փոխհամաձայնեցված տնտեսական քաղաքականության էֆեկտով*, որն արտահայտվում է անդամ երկրների միջազգային մրցունակության բարելավմամբ՝ ինչպես ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում:

Երկրների տնտեսական զարգացման գործընթացի դիտարկման, սիներգիկ էֆեկտի ստացման, մրցունակության մակարդակի բարելավման տեսանկյունից ինտեգրացիոն միավորման անդամ երկրների տնտեսական զարգացման վրա

¹ Влияние интеграционных процессов на конкурентоспособность национальной экономики//Almaty Management University. 2015., URL: http://iab.kz/upload/pdf/Евразийская_интеграция_2015

ինտեգրացիոն գործընթացների ազդեցության ուսումնասիրությունն ու գնահատումը արդիական խնդիր է: Այս առումով կարևորվում է *մրցունակության ներուժի* ուսումնասիրությունը: Այն սահմանվում է որպես ֆինանսատնտեսական և աշխատանքային ռեսուրսների ամբողջություն, որն անհրաժեշտ է արտաքին շուկաներում մրցունակ արտադրանք ներկայացնելու, տնտեսական աճի և բնակչության կյանքի որակի ապահովման համար: Այս առումով՝ *մրցունակությունը մրցունակության ներուժի արդյունավետ իրացումն է*: Տնտեսական ինտեգրացիան ստեղծում է նպաստավոր նախապայմաններ՝ մրցունակության ներուժի ձևավորման, զարգացման և իրացման համար:

Մրցունակության ներուժի գնահատման համար կիրառվում են ցուցանիշների հետևյալ խմբերը՝

1. **Փոխադարձ առևտրի ներուժը** բնութագրող ցուցանիշներ, որոնք բնորոշում են ինտեգրացիոն խմբավորման անդամ-պետությունների միջև առևտրային հոսքերի քանակական և որակական ցուցանիշները, դրանց ազդեցությունը անդամ երկրների տնտեսական զարգացման վրա,
2. **Անդամ պետությունների ֆինանսական և ներդրումային ներուժը** բնութագրող ցուցանիշները, որոնք երկրի տնտեսական զարգացման և արտադրական ներուժի գնահատականներ են,
3. **Անդամ երկրների մրցունակության աճի, փոխադարձ և միջազգային առևտրի, մրցակցային պայմանները** բնութագրող ցուցանիշները և այլն:

Ուսումնասիրություններն իրականացրել ենք ԵԱՏՄ օրինակով, 2013-2019թթ տվյալների հիման վրա (Հայաստանի և Ղրղզստանի դեպքում դիտարկել ենք նաև նախքան ԵԱՏՄ-ին անդամակցությունն ունեցած ցուցանիշները):

Աղյուսակ 1: ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտրի ծավալները, (% ամբողջի նկատմամբ), 2013-2019թթ²

Երկիր	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Ռուսաստան	63.4	62.7	63.3	62.4	63.4	64,7	63,8
Ղազախստան	9.5	9.1	10.8	9.2	9.5	10	10
Բելառուս	25.8	28.2	24.2	26.5	25.1	23,1	23,9
Հայաստան	0.5	0.6	0.5	0.9	1	1,1	1,3
Ղրղզստան	0.8	1	1.2	1	1	1,1	1

² Աղբյուրը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական տվյալների բազա /տարեգրքեր 2013-2019թթ

http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_st_ents/Brief_Statistics_Yearbook_2019.pdf

Տվյալները փաստում են, որ, չնայած ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտրի ծավալների և ցուցանիշների դինամիկ փոփոխությանը, ինտեգրացիոն խմբավորման ներսում անհամամասնությունները դեռևս պահպանվում են:

Այսպես, Բելառուսի և Ղազախստանի հանրապետություններից արտահանման հիմնական ուղղությունը շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը, այս երկրների միջև առևտրաշրջանառությունը թույլ է զարգացած, ավելին՝ Ղազախստանից Բելառուս արտահանումը շարունակական նվազման միտումներ է արձանագրում: ԵԱՏՄ անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի ցուցանիշների ուսումնասիրությունն ու վերլուծությունը հավաստում են դիտարկված երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների դինամիկ աճը: Ինտեգրացիայի անդամ բոլոր երկրների առևտուրը մեծապես նպաստակաուղղված է դեպի Ռուսաստան: Դրոզտանը մնում է արտահանման ցուցանիշով ամենաքիչ ինտեգրված երկիրը, այնինչ Ղազախստանից ամենամեծ ծավալով ներմուծում իրականացնող երկիրն է:

ԵԱՏՄ երկրների միջև առևտրատնտեսական ինտեգրման համակողմանի ուսումնասիրության համար դիտարկել ենք նաև այս երկրների միջև առևտրի ապրանքային կառուցվածքը՝ ըստ ԵԱՏՄ ապրանքային դասակարգման³, որի արդյունքները փաստում են, որ ներքին շուկայում բարձր մրցունակ ապրանքներ են հանդիսանում (մրցակցում են միաժամանակ երեք և ավելի երկրներ) կենդանի կենդանիներ, ձու, ձվամթերք, կաշի, մորթի, բուսական ծազման արտադրանք, հանքահումքային ապրանքներ և այլ ապրանքատեսակները: Որոշ ապրանքատեսակներ ԵԱՏՄ անդամ երկրների մասնագիտացման հիմքն են և կարող են դիտարկվել որպես ԵԱՏՄ շուկայում ապրանքափոխանակման հիմքը, ինչը հատկապես կարևորվում է՝ ներմուծման փոխարինման տեսանկյունից⁴:

ԵԱՏՄ երկրների ներդրումային դիրքի, օտարերկրյա ներդրումների ներհոսքն ու արտահոսքը բնութագրող ցուցանիշների⁵ ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ ուղղակի փոխադարձ ներդրումների կառուցվածքում ուղղակի ներդրումների մեծ ծավալով ներհոսք նկատվել է Բելառուսում՝ 617,5 մլն. դոլար, Ղազախստանում՝ 605,9 մլն. դոլար: Ներդրումների ամենամեծ արտահոսք

³ Տվյալները հասանելի են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշտոնական կայքէջում՝ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/tradestat/tables/intra/Pages/2019/11.aspx

⁴ Миграция А.А. Конкурентный потенциал стран СНГ в формате региональной интеграции (на примере стран ЕАЭС). М.: Институт экономики РАН, 2015. - 21

⁵ 2019թ-ի ցուցանիշները դեռևս հրապարակված չեն

Прямые инвестиции в Евразийском экономическом союзе. 2018 год
http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/statistical_publications/Documents/finstat_5/finstat_5_2018f.pdf

ունեցող (ներդրող) երկիրը ԵԱՏՄ-ում Ռուսաստանն է՝ 2018թ-ին ներդրումների արտահոսքը կազմել է 1382 միլիոն դոլար:

Ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ ԵԱՏՄ երկրների համար ընդհանուր են մի շարք հիմնախնդիրներ՝ տնտեսական վերափոխումների արդյունավետության բարձրացում, տնտեսական և քաղաքական ինստիտուտների ձևավորում, մասնավորեցման գործընթացի վերջնականացում, տնտեսական սուբյեկտների գործունեության ազատականացում, մաքսային ընթացակարգերի պարզեցում և այլն:

Ատենախոսության երրորդ՝ **«Միջազգային մրցունակության բարելավման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»** գլխում իրականացվել է ՀՀ տնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների, դրանց դինամիկ փոփոխության վերլուծություն՝ 2012-2019թթ համար: ՀՀ տնտեսության մրցունակության քանակական գնահատումն իրականացվել է արտաքին առևտրում մեր երկրի ունեցած համեմատական (արտահայտված) առավելությունների գործակցի հաշվարկմամբ՝ հունգարացի տնտեսագետ Բելա-Բալասայի բանաձևով, որի արդյունքում առանձնացվել են ՀՀ համաշխարհային առևտրին մասնակցությունը պայմանավորող, մրցակցային առավելություններ ունեցող և նման առավելություններ չունեցող ապրանքատեսակները: Մրցունակության վարկանիշային, ինտեգրալային գնահատման նպատակով կառուցվել է նոր համաթիվ՝ **«Մրցունակության ներուժի» ինտեգրալային համաթիվը**, որի կազմում ներառվել են մրցունակության ներուժը տարբեր կողմերից բնութագրող մասնակի համաթիվեր: Հաշվարկները, գործոնային, կլաստերային վերլուծությունները, համաթվի նշանակալիության ստուգումն իրականացվել է SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ: Առանձնացվել են ՀՀ տնտեսության մրցունակության բարելավմանը նպաստող և խոչընդոտող ցուցանիշները, դիտարկվել են ՀՀ մրցունակության հիմնախնդիրները, առաջարկվել դրանց լուծման հիմնական ուղիները:

Բելա-Բալասայի գործակիցի միջոցով 2012-2019թթ. ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի ուսումնասիրության, ՀԱԳ-երի հաշվարկի, վերլուծության արդյունքում դիտարկվել են այն ապրանքատեսակները, որոնց արտահանման համար ՀՀ-ը ունի ներուժ, ինչպես նաև նրանք, որոնց ներմուծման փոխարինման հնարավորությունները ևս կարելի է դիտարկել՝ դրանք վերածելով մեր երկրի համար մրցակցային առավելությունների, ինչն, իր հերթին, կնպաստի Հայաստանի միջազգային մրցունակության բարելավմանը:

Մրցունակության վարկանիշային գնահատումն իրականացվել է ինտեգրալային համաթվի կառուցմամբ, որում որպես ենթահամաթիվներ ներառել

ենք ատենախոսության առաջին գլխում իրականացված կոոելացիոն վերլուծության արդյունքում մրցունակության համաթվի հետ առավելագույն կոոելացված համաթվերը: Նոր համաթիվն անվանել ենք **մրցունակության ներուժի ինտեգրալային համաթիվ**⁶ նպատակ ունենալով ընդգծելու դրա՝ միջազգային շուկայում երկրի մրցակցելու հնարավորությունները գնահատելը:

Համաթիվը հաշվարկվել է մի քանի փուլերով.

1. *Վիճակագրական տվյալների բազայի կառուցում* - բազան ընդգրկում է 94 երկրների ցուցանիշներն՝ ըստ 10 ենթահամաթվերի, 2012-2019թթ.-ի համար.

2. *Բացակայող տվյալների լրացում*⁷ «**Բազմակի իմպուտացիայի (մուտքագրումների)**» մեթոդով (մուտքագրումներն իրականացվել են SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ, գծային ինտերպոլյացիայի միջոցով)⁶:

3. *Ցուցանիշների նորմավորում (0-1) միջակայքում*, որի անհրաժեշտությունը պայմանավորված է ցուցանիշների տարբեր չափողականությամբ:

4. *Գործոնային վերլուծություն՝ ենթահամաթվերի կշռային գործակիցների հաշվարկման համար:*

5. *Գործոնային վերլուծության հավաստիության ստուգում*⁷ Կայզեր-Մեյեր-Օլկին (KMO) և Բերթելթե թեստի միջոցով⁷, որի արժեքը դիտարկված բոլոր տարիների համար բավականին բարձր է՝ (0,891-0.936), իրականացված գործոնային վերլուծությունը հավաստի է:

6. *Մրցունակության ներուժի համաթվի հաշվարկ*⁸՝ հետևյալ բանաձևով⁸.

$$CP_{ind} = \sum_{i=1}^n w_i \times s_i, \text{ որտեղ՝}$$

CP_{ind} – Մրցունակության ներուժի ինտեգրալային համաթիվն է,

$i=1;2;3; \dots n$ – ենթահամաթվերն են,

w_i – յուրաքանչյուր ենթահամաթվի կշռային գործակիցն է,

s_i – երկրի միավորներն են՝ ըստ $i=1,2, \dots 10$ ենթահամաթվերի:

7. *Մրցունակության ներուժի ինտեգրալային համաթվի արդյունքների հավաստիության ստուգում*⁷՝ ալֆա թեստի α -Cronbach ցուցանիշի միջոցով, որի արդյունքը ևս հավաստում է ստացված արդյունքների արժանահավատությունը:

8. *Կլաստերային վերլուծություն*⁹՝ տվյալների դասակարգման խնդրի լուծման համար⁹: Դիտարկված 94 երկրները դասակարգվել են 4 կլաստերներում:

⁶Բացակայող տվյալների մուտքագրման ժամանակ SPSS ծրագիրը տվյալները գեներացնում է ռեգրեսիոն մեթոդի կիրառմամբ: <http://www.appliedmissingdata.com/spss-multiple-imputation.pdf>

⁷ Kaiser, H. 1974. An index of factor simplicity. Psychometrika 39: 31–36

⁸ Sargsyan Arpine (2018) Assessment of Global Competitiveness: Methodology And Its Implication For EU and EEU, proceedings of the 27th International Scientific Conference on Economic and Social Development, ISSN 1849-3327 / print ISSN 1849-6628, ISSN 1849-7535, p. 83

Մրցունակության ներուժի ինտեգրալային համաթվի՝ ըստ ենթահամաթվերի և ցուցանիշների արդյունքների ուսումնասիրությունն իրականացվել է ԵԱՏՄ երկրների համար առանձին՝ ներկայացնելով ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունեցող ցուցանիշները:

«Վ միջազգային մրցունակության հիմնախնդիրների և մարտահրավերների ուսումնասիրության նպատակով դիտարկվել են Մրցունակության ներուժի ինտեգրալային համաթվի 2012-2019թթ արդյունքները, որոնք փաստում են մեր երկրի մրցունակության ներուժի դինամիկ աճի մասին:



Գծապատկեր 1: Մրցունակության ներուժի համաթվով «Վ» արդյունքները, 2012-2019թթ (տեղեր և վարկանիշային միավորներ):

«Վ-ի մրցունակության ներուժի դրական դինամիկան հիմնականում պայմանավորված է եղել գործարարության և ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ, ներդրումների ներգրավման, նորարարական գործունեության խրախուսման, ինչպես նաև ԵԱՏՄ կազմում «Վ իրականացված քաղաքականության արդյունքում:

Մրցունակության բարելավման ուղղությամբ «Վ-ում առկա հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության նպատակով մրցունակության ներուժի ինտեգրալային համաթիվը դիտարկվել է նաև ըստ առանձին ենթահամաթվերի և դրանց կազմում ներառված ցուցանիշների՝ բացահայտելու այն ոլորտները, որոնց զարգացումը «Վ միջազգային մրցունակության բարելավման նպատակով առաջնահերթ նշանակություն ունեն: Արդյունքում առանձնացվել են «Վ տնտեսության մրցունակության բարելավմանը նպաստող և խոչընդոտող 10-ական գործոնները, նաև «Վ տնտեսության մրցունակության բարելավման քաղաքականության թիրախային ուղղությունները: «Վ մրցունակության ներուժը խթանող գործոնները կարելի է դիտարկել որպես մրցակցային առավելություններ և իրականացնել այդ գործոնների մակարդակի պահպանման, դրական

՝ Ս. Ա. Դավոյան, «Երկրների բազմաբնույթ վերափոխումների համեմատական արդյունավետության վերլուծությունը: Ժամանակի մարտահրավերները և հաղթահարման ուղիները» / Գյումրի, «Դաիր» հրատարակչություն, 2016թ., էջ 245-248

դինամիկայի ապահովմանն ուղղված քաղաքականություն (հատկապես՝ կրթության և գիտության, արդյունաբերական զարգացման, փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման, զբոսաշրջության զարգացման և այլ ուղղություններով):

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների և ստացված գիտական արդյունքների ամփոփման արդյունքում կատարվել են **եզրակացություններ**, որոնց բովանդակությունը հիմնականում կայանում է հետևյալում՝

- Ազգային տնտեսության մրցունակությունը բարդ և բազմագործոն հասկացություն է: Հաշվի առնելով ազգային տնտեսության մրցունակության բարդ և բազմամակարդակ բնույթը, մեկ միասնական սահմանման բացակայությունն ու դրա անհրաժեշտությունը, ընդհանրացնելով այս հասկացության վերաբերյալ առկա սահմանումների հիմնական կողմերը՝ առաջարկել ենք մրցունակության հետևյալ սահմանումը՝ **«Ազգային տնտեսության մրցունակությունը երկրի ունակությունն է ձևավորելու քաղաքական, սոցիալ-տնտեսական, ֆինանսական ինստիտուտների համակարգված համախումբ, որն անհրաժեշտ է տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում մրցակցային ֆինանսական, ներդրումային, առևտրային, նորարարական ներուժի ձևավորման և իրացման համար՝ նպաստելով տնտեսության զարգացմանը և երկրի բնակչության կյանքի որակի բարելավմանը»:**
- Միջազգային մրցունակության մակարդակի քանակական գնահատման անհրաժեշտությունը պայմանավորված է առանձին երկրների՝ միջազգային մրցակցային դիրքի վերլուծության, համեմատական վերլուծությունների իրականացման նպատակահարմարությամբ: Մրցունակության մակարդակի քանակական գնահատումը պետք է հիմնված լինի համեմատական վերլուծությունների վրա. անհրաժեշտ է համեմատել կազմակերպությունները միմյանց հետ, իսկ տնտեսությունները՝ միմյանց:
- Մրցունակության գնահատման համար կիրառվում են մի շարք մոտեցումներ: Տարբեր համաթվերի, գնահատման մոտեցումների դիտարկման արդյունքում ակնհայտ է դարձել համաթվերի կառուցման, հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման անհրաժեշտությունը. չնայած նրան, որ դրանք ունեն ակնհայտ առավելություններ՝ ցուցանիշների ընդգրկման, հնարավորինս համապարփակ վերլուծությունների առումով, այնուամենայնիվ, գերծ չեն նաև թերություններից, որոնց վերացման, առավել համապարփակ

վերլուծությունների իրականացման նպատակով մեր կողմից մշակվել է նոր՝ մրցունակության ներուժի ինտեգրալային համաթիվը:

- Ազգային տնտեսության մրցունակության վրա ինտեգրացիայի ազդեցությունը կարող է արտահայտվել համեմատական առավելությունների ձևավորման և իրացման, տնտեսական շահերի իրագործման, մասշտաբից տնտեսման, տարածաշրջանային մակարդակով տնտեսական գործունեության ցուցանիշների բարելավման միջոցով: Ինտեգրացիայի՝ մրցունակության վրա ունեցած ազդեցությունը կրում է երկակի բնույթ: Այն կարող է դրսևորվել մի կողմից դինամիզմի և զարգացման, մյուս կողմից՝ հակասությունների խորացման և մրցունակության նվազման եղանակներով: Նման ազդեցությունն էապես կախված է պետության կողմից որդեգրված տնտեսական քաղաքականության բնույթից, երկրում տնտեսական և քաղաքական իրավիճակների ճիշտ գնահատումից, տնտեսական ռեսուրսների առկայությունից կամ բացակայությունից:
- Մրցունակության ներուժ հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսատնտեսական և աշխատանքային ռեսուրսների ամբողջություն, որն անհրաժեշտ է արտաքին շուկայում մրցունակ արտադրանք ներկայացնելու, տնտեսական աճի և բնակչության կյանքի որակի ապահովման համար: Այս առումով՝ մրցունակությունը մրցունակության ներուժի արդյունավետ իրացումն է: Տնտեսական ինտեգրացիան ստեղծում է նպաստավոր նախապայմաններ՝ մրցունակության ներուժի ձևավորման, զարգացման և իրացման համար:
- ԵԱՏՄ երկրների համար ընդհանուր հիմնախնդիրների (տնտեսական վերափոխումների անկատարության, ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակի, ֆինանսական շուկաների զարգացվածության ցածր մակարդակի, նորարարական ցածր ներուժի, ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակի և այլն) լուծման լավագույն ուղին, կարծում ենք ազգային տնտեսական քաղաքականության ուղղությունների հստակեցումը, դրանց փոխհամապատասխանեցումն է ինտեգրացիայի անդամ երկրների կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության ուղղությունների հետ: ԵԱՏՄ անդամ երկրների մրցունակության բարելավման ընդհանուր հեռանկարներն են՝ մակրոտնտեսական կայունության ապահովումը, արտաքին առևտրային ներուժի իրացումը, տարածքային զարգացումը, տնտեսության նորարարական զարգացումը, ենթակառուցվածքների զարգացումը, մարդկային ներուժի զարգացումը, գործարար ակտիվության և ներդրումային գրավչության ապահովման պայմանների ստեղծումը և այլն:

- Ինտեգրացիոն խմբավորմանը երկրի մասնակցության կարևորագույն նպատակներից են՝ ազգային տնտեսությունների զարգացման համար նպաստավոր նախադրյալների ձևավորումը, տարածաշրջանային և միջազգային շուկաներում դրանց մրցունակության բարելավումը: Այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ապահովել ապրանքների, աշխատուժի, կապիտալի և ծառայությունների շարժի ազատականացումը, երկրների ֆինանսական շուկաների զարգացումը, գործարար ակտիվության խրախուսումը, ներդրումային գրավչության բարելավումը, ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային զարգացումը և այլն:
- ՀՀ մրցունակության վերլուծությունն իրականացվել է հունգարացի տնտեսագետ Բելա-Բալասայի համեմատական (արտահայտված) առավելությունների գործակցի միջոցով, ինչպես նաև մեր կողմից մշակվել և կառուցվել է նոր՝ մրցունակության ներուժի ինտեգրալային համաթիվ, որի 10 ենթահամաթվերի և դրանցում ներառված մոտ 550 ցուցանիշների միջոցով գնահատվել է 94 երկրների մրցունակության ներուժը՝ 2012-2019 թվականների համար:
- 2012-2019թթ. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի ուսումնասիրության, համեմատական առավելությունների գործակիցների հաշվարկի և վերլուծության արդյունքում կարելի է դիտարկել այն ապրանքատեսակները, որոնց արտահանման համար ՀՀ-ը ունի ներուժ, ինչպես նաև այն ապրանքատեսակները, որոնց ներմուծման փոխարինման հնարավորությունները ևս կարելի է դիտարկել՝ դրանք վերաձելով մեր երկրի համար մրցակցային առավելությունների, ինչն, իր հերթին, կնպաստի Հայաստանի միջազգային մրցունակության բարելավմանը:
- ՀՀ առևտրի մրցունակության բարելավումն ազգային տնտեսության մրցունակության բարելավման անկյունաքարը պետք է լինի, ուստի արտահանմանը միտված մրցունակ տնտեսության ստեղծման նպատակով անհրաժեշտ է խրախուսել արագ աճի տեմպեր գրանցող ապրանքատեսակների արտադրությունն ու արտահանումը՝ զարգացնելով տեքստիլի արտադրությունը, գյուղատնտեսությունը, պատրաստի սննդի արտադրությունը, ոսկերչությունը և այլ ոլորտներ: Նման քաղաքականության արդյունքում ՀՀ-ը կունենա արտաքին առևտրի օպտիմալ կառուցվածք, հետևապես՝ նաև երկարաժամկետում զուտ արտահանման ցուցանիշի դրական դինամիկա:
- Մեր կողմից մշակված մրցունակության ներուժի ինտեգրալային համաթվի արդյունքները կիրառելի են համեմատական վերլուծությունների

իրականացման, դիտարկված երկրների թվի, ներառված ցուցանիշների ավելացման, այդ երկրների մրցունակության մակարդակի, ներուժային ուղղությունների, բարելավման հնարավորությունների գնահատման, հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների առաջադրման համար: Իրականացված վերլուծության արդյունքները կիրառելի են՝ ՀՀ առևտրի կառուցվածքի լավարկման համար. մի կողմից համեմատական առավելություններ ապահովող ապրանքների արտահանման ավելացման, մյուս կողմից՝ ներուժ ունեցող ապրանքների արտադրության խթանման և ներմուծման փոխարինման հնարավորությունների բացահայտման համար:

- ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.
 - Ենթակառուցվածքների զարգացման ոչ բավարար մակարդակ,
 - Տնտեսության կառուցվածքի կենտրոնացման բարձր աստիճան,
 - Անբարենպաստ աշխարհագրական դիրք, տարանցիկ ճանապարհներից կախվածություն,
 - Արտահանման պետական աջակցության մեխանիզմների անկատարություն, արտահանման գործառնությունների հարկային և մաքսային ընթացակարգերի անարդյունավետություն,
 - Ներքին շուկաներում մրցակցության ցածր ինտենսիվություն, հակամենաշնորհային քաղաքականության անարդյունավետություն,
 - Ներդրողների, տնտեսվարող սուբյեկտների իրավական պաշտպանության մեխանիզմների անկատարություն,
 - Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում առկա ներուժի ոչ լիարժեք օգտագործում,
 - Տնտեսվարող սուբյեկտների ռեսուրսային ներուժի սահմանափակություն, տեխնոլոգիական հագեցվածության ցածր մակարդակ,
 - Ծառայությունների և սպասարկման ոլորտի անձնակազմի որակավորման ոչ բավարար մակարդակ, ինչն էապես խոչընդոտում է ծառայությունների (հատկապես՝ զբոսաշրջային) արտահանմանը:
- ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման նպատակով անհրաժեշտ է ունենալ մրցունակության մակարդակի բարելավման պետական ռազմավարական ծրագիր, որի հիմքում պետք է դնել մի շարք սկզբունքներ:
 - Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրականացում, մրցունակ ոլորտների և ճյուղերի խթանում,
 - Ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնում՝ հատկապես մրցունակության ներուժ ունեցող ոլորտներում,

- Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման մեխանիզմների բարելավում՝ հայրենական արտադրության խթանման, ներքին շուկաներում պահանջարկի պայմանների լավարկման միջոցով,
 - Արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի գործունեության խրախուսման մեխանիզմների մշակում, արտահանման խթանման համակարգի ձևավորում՝ ավանդական և ժամանակակից մեխանիզմների, գործիքների համադրմամբ,
 - Փոքր ու միջին ձեռնարկատիրության գործունեության խրախուսում՝ նպատակ ունենալով բարձրացնել նորամուծությունների իրականացման և առևտրայնացման, ՓՄՁ միջազգայնացման աստիճանը,
 - Տարածքային համաչափ զարգացման հնարավորությունների ապահովում,
 - Բնապահպանական միջոցառումների իրականացում, «կանաչ տնտեսության» զարգացում,
 - Մարդկային կապիտալի զարգացում՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ֆինանսավորման ավելացման, միջազգայնացման միջոցով:
- Հայաստանի Հանրապետության մրցունակության հիմնախնդիրների, բարելավման հնարավորությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարելի է ձևակերպել **ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման սկզբունքը**: Այն է՝ *մրցունակության ներուժի առաջնորդում՝ մրցունակության բոլոր մակարդակներում՝ կազմակերպությունների, ճյուղերի և ազգային տնտեսության գործունեության արդյունավետության և արտադրողականության շարունակական աճի ապահովմամբ՝ ի հաշիվ նորարարությունների մշակման և ներդրման, ինստիտուցիոնալ կարողությունների և մարդկային կապիտալի զարգացման, ենթակառուցվածքների զարգացման և արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանման:*

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սարգսյան Ա., «Երկրի տնտեսական մրցունակության գնահատման մեթոդական մոտեցումների համեմատական վերլուծությունը ԵԱՏՄ երկրների օրինակով» Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր, 2018, էջ 648-655

2. Սարգսյան Ա., «Տնտեսության մրցունակության նորարարական հիմքը», Գիտական Արցախ, №1, 2018, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., ISSN 2579-2652, էջ 353-357
3. Սարգսյան Ա., «ԵԱՏՄ երկրների մրցունակության ներուժը. փոխադարձ և միջազգային առևտուր», Գիտական Արցախ, № 2(3), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., ISSN 2579-2652, էջ 277-284
4. Sargsyan A, “Variety of Approaches in Assessment of Global Competitiveness”. International Journal of Economics & Management Sciences, 2017, 6: 479. doi: 10.4172/2162-6359.1000479, ISSN: 2162-6359
5. Sargsyan A., “Trade competitiveness: approaches of assessment (The case of Armenia)”. Research in International Business and Finance. (ISSN: 2251-0028) Vol. 5(1) pp. 98-107, October 2018, DOI: <http://dx.doi.org/10.14303/jribm.2018.021>
6. Davoyan S., Sargsyan A., “The Assessment of Various Reforms with the Help of an Integral Index (The Case of Transition Economies)”, Journal of Economic and Social Development (JESD) – Scopus indexed, Vol. 5, No. 2, September 2018, ISSN : 2456-1045, DOI: 10.26352/CJ02F5012,
7. Sargsyan, A. “Export competitiveness: Assessment through the Balassa index (the case of Armenia)”. *Preprints* 2018, 2018060253 (doi: 10.20944/preprints201806.0253.v1).
8. Sargsyan A., “Assessment of Global Competitiveness: Methodology and Its Implication for EU and EEU”, proceedings of the 27th International Scientific Conference on Economic and Social Development, Rome, 2018, ISSN 1849-3327 /print ISSN 1849-6628
9. Sargsyan A., “International economic competitiveness: interrelation with integration, trade and innovation”, EU-EaP Academy: supporting next generation of scholars in european studies. Collection of the research papers. Ukrainian Association of Professors and Researchers of European Integration. – Kyiv, 2019, p. 183-191
10. Davoyan S., Sargsyan A, Davoyan A., Harutyunyan D., “Efficiency of Socio-Economic Reforms -The assessment through Integral Index”, *Advance Research Journal of Multidisciplinary Discoveries* – Scopus indexed; 39(9), ISSN: 2456-1045, pp. 59-64
11. Sargsyan A., “Armenia's trade dilemma. Where to trade? EU or EAEU”, “The 10th Anniversary of the Eastern Partnership: Lessons Learnt, Current Challenges and Future Perspectives”. Conference Proceedings. Kyiv, June 7, 2019. – Ukrainian Association of Professors and Researchers of European Integration. – Kyiv, 2019, p. 150-154
12. Саргсян А., Возможности реализации конкурентных преимуществ членов ЕАЭС. Коммерческий и финансовый потенциал, Из зоны бедствия в зону развития... Уроки прошлого и вызовы времени: сборник тезисов докладов участников Международной научной конференции. 21–23 октября 2019 г. –Москва: ФГБОУ ВО «РЭУ им. Г. В. Плеханова», 2020. – 224 с. (с.100-112) / ISBN 978-5-7307-1692-6

САРГСЯН АРПИНЕ ДАВИДОВНА

**ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ
КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ РА В ПРОЦЕССАХ ИНТЕГРАЦИИ**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 – “Теория экономической науки и история экономической мысли”.

Защита диссертации состоится 16 апреля 2021г. в 13:30 часов, на заседании специализированного совета по экономике 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете.
по адресу: 0025, г.Ереван, ул. Абовяна 52

Р Е З Ю М Е

В современных условиях мировая экономика сталкивается с различными проблемами, новыми условиями взаимосвязанности стран и регионов. Обеспечение стабильности экономических систем является одним из приоритетных проблем. В такой ситуации развитие экономики, улучшение качества жизни населения считаются важнейшими принципами международной конкурентоспособности страны. Социально-экономические изменения в некоторых странах по-разному влияют на развитие национальной экономики. Некоторым странам удалось стабилизировать экономический рост, в то время как другие остаются в процессе реконструкции. Страны с переходной экономикой тоже участвуют в интеграционных процессах, поэтому повышение конкурентоспособности национальной экономики становится особо важной проблемой.

Исследование посвящено всестороннему представлению и решению вышеупомянутых проблем, изучению инструментов оценки конкурентоспособности, подходов к совершенствованию методов, что является причиной актуальности темы диссертации.

Объектом исследования является международная конкурентоспособность Республики Армения в условиях интеграции, а предметом исследования является совокупность условий и факторов, обеспечивающих международную конкурентоспособность страны.

Целью диссертации является выявление особенностей и условий конкурентоспособности экономики Армении, рассмотрение вопросов формирования конкурентных преимуществ, а также представление предложений о путях повышения конкурентоспособности экономики Армении.

Для достижения указанной цели в диссертации были поставлены следующие **задачи**:

1. Изучить теоритические-методологические подходы к оценке конкурентоспособности национальной экономики, выявить различные направления и особенности концепции конкурентоспособности,
2. Выявить факторы повышения конкурентоспособности, формирования конкурентных преимуществ, охарактеризовать их взаимную связь и влияние на уровень конкурентоспособности.
3. Оценить влияние отдельных факторов на уровень конкурентоспособности.
4. Провести сравнительный анализ методологических подходов к оценке международной конкурентоспособности,
5. Изучить взаимосвязь конкурентоспособности и экономической интеграции национальной экономики,
6. Оценить потенциал конкурентоспособности стран-членов интеграционной группы, в условиях интеграционных процессов (по примеру государств-членов Евразийского экономического союза),
7. Выявить проблемы обеспечения и повышения конкурентоспособности экономики РА,
8. Определить возможности повышения конкурентоспособности экономики Армении в условиях интеграционных процессов.

Основные положения **научной новизны** заключаются в следующем:

1. Были проанализированы определения международной конкурентоспособности, данные различными исследователями и международными организациями, в результате обобщения которых было предложено новое определение конкурентоспособности национальной экономики.
2. Были оценены и сравнены особенности конкурентного потенциала государств-членов ЕАЭС, его отдельные направления (внешняя и взаимная торговля, финансовый и инвестиционный потенциал), в результате охарактеризованы особенности конкурентоспособности этих стран,
3. Проведен анализ структуры экспорта Республики Армения, с использованием коэффициента сравнительных преимуществ, в результате чего были выделены потенциальные направления внешней торговли Республики Армения.
4. Рассчитан новый интегральный индекс потенциала конкурентоспособности, который включает в себя различные субиндексы, весовые коэффициенты которых были рассчитаны отдельно для каждого года в соответствии с их относительной важностью.

ARPINE DAVIT SARGSYAN

**PROBLEMS OF IMPROVING ECONOMIC COMPETITIVENESS OF RA IN
THE PROCESSES OF INTEGRATION**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.01 “The theory of economic science and the history of economic thought”

The defense of the dissertation will take place on April 16th, 2021, at 13:30, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address:52 Abovyan str., Yerevan, 0025

ABSTRACT

Currently, the global economy faces various problems, new conditions of the interconnectedness of countries and regions. Ensuring the stability of economic systems is one of the priority problems. In this situation, economic development, improving the quality of life of the population are considered the most important principles of the country's international competitiveness. Socio-economic changes in some countries influence on the development of the national economy in different ways. Some countries have managed to stabilize economic growth, while others remain in the process of reconstruction. Countries with economies in transition also participate in integration processes, so increasing the level of competitiveness of the national economy is becoming an especially important problem.

The study is devoted to the comprehensive presentation and solution of the above-mentioned problems, the study of competitiveness assessment tools, approaches to improving methods, which is the relevance of the topic of the dissertation.

The object of the study is the international competitiveness of the Republic of Armenia in the context of integration, and the subject of the study is a set of conditions and factors ensuring the international competitiveness of the country.

The purpose of the dissertation is to identify the characteristics and conditions of competitiveness of the Armenian economy, consider the formation of competitive advantages, as well as to submit proposals on ways to increase the competitiveness of the Armenian economy.

To achieve this goal, the following **research tasks** were identified in the dissertation:

1. To study theoretical and methodological approaches of assessment of the competitiveness of the national economy, to identify various areas and features of the concept of competitiveness,

2. To identify the factors of formation of competitive advantage and increase of competitiveness, to characterize their interrelation and impact on the level of competitiveness.
3. To assess the impact of individual factors on the level of competitiveness.
4. To conduct a comparative analysis of methodological approaches of assessing international competitiveness,
5. To study the relationship of competitiveness of the national economy and economic integration,
6. To assess the competitiveness potential of the member countries of the integration group, in the context of integration processes (following the example of the member states of the Eurasian Economic Union),
7. To identify the problems of ensuring and enhancing the competitiveness of the RA economy,
8. To identify opportunities to increase the competitiveness of the Armenian economy in the context of integration processes.

The main provisions of **scientific novelty** are as follows:

1. The definitions of international competitiveness given by various researchers and international organizations were analyzed, as a result of generalization of which a new definition of the competitiveness of the national economy was proposed.
2. The features of the competitive potential of the EAEU member states, its individual areas (foreign and mutual trade, financial and investment potential) were evaluated and compared, as a result, the characteristics of the competitiveness of these countries were identified,
3. The analysis of the export structure of the Republic of Armenia was carried out with the help of the coefficient of comparative advantages. As a result, the potential directions of foreign trade of the Republic of Armenia were identified.
4. A new integral index of competitiveness potential has been calculated, which includes various sub-indexes, the weight coefficients of which were calculated separately for each year in accordance with their relative importance.

